

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ԳՈՀԱՐ ՂԱՀՐԻՅԱՆԻ, ՀԱՅԿԱԶՆ ՂԱՀՐԻՅԱՆԻ ԵՎ ԼԵՎՈՆ ՀԱՅՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 361-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Գոհար Ղահրիյանի, Հայկազն Ղահրիյանի և Լևոն Հայրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Գոհար Ղահրիյանի, Հայկազն Ղահրիյանի և Լևոն Հայրյանի (այսուհետ՝ Դիմողներ, ներկայացուցիչ՝ փաստաբան Հայկ Հարությունյան) դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2026 թվականի սեպտեմբերի 22-ին (փոստային ծառայությանն է հանձնվել սեպտեմբերի 18-ին), որով Դիմողները խնդրել են.

*«(...) **ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասը՝ այնքանով, որքանով չի նախատեսում արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով դատարանի կողմից կայացված որոշման վերաքննության կարգով բողոքարկման հնարավորություն, ճանաչել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր**»:*

2. Դիմողները, ներկայացնելով թիվ ԵԴ2/1367/02/26 քաղաքացիական գործի դատավարական նախապատմությունը, մասնավորապես, նշում են, որ արբիտրաժային վճիռների չեղարկման դիմումների վերաբերյալ կայացված դատարանի որոշումների անբողոքարկելիությունը ոչ մի կերպ համատեղելի չի կարող լինել դատական պաշտպանության իրավունքը երաշխավորող Սահմանադրության և միջազգային իրավունքի նորմերի պահանջների հետ՝ Հայաստանի Հանրապետությունում ընդունված դատական պաշտպանության ընդհանուր ստանդարտների լույսի ներքո:

Դիմողները գտնում են, որ արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության իսպառ բացառումը, հաշվի առնելով այդ ակտի բնույթը, դրա իրավական հետևանքները, դատական վերահսկողության առարկան և այլընտրանքային պաշտպանության միջոցների բացակայությունը, չի ապահովում արդյունավետ դատական պաշտպանության համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգ և ընթացակարգ:

Դիմողները պնդում են, որ վիճարկվող դրույթով արբիտրաժի վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ դիմումի քննության արդյունքով առաջին ատյանի դատարանի կողմից կայացված որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության բացակայության պայմաններում անձի համար հասանելի չէ համարժեք այլ դատական միջոց, որով հնարավոր կլիներ վերանայել առաջին ատյանի դատարանի կողմից թույլ տրված իրավական կամ դատական հնարավոր սխալը: Հավելելով՝ Դիմողները նշում են, որ առաջին ատյանի դատարանի կողմից համապատասխան դիմումի քննության արդյունքով կայացված որոշման՝ վերաքննության կարգով բողոքարկման իրավական հնարավորության բացառումը չի լրացվում դատավարական որևէ այլ երաշխիքով, որը նույն գործի շրջանակում կարող էր ապահովել առաջին ատյանի դատարանի այդ որոշման լիարժեք դատական վերահսկողությունը:

Ըստ Դիմողների՝ արբիտրաժային վճռի նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետությունը չի կարող գնահատվել միայն այն հանգամանքով, որ անձին տրվել է առաջին ատյանի դատարան դիմելու հնարավորություն: Դիմողները պնդում են, որ, երբ առաջին ատյանի դատարանն իրականացնում է արբիտրաժային վճռի նկատմամբ դատական վերահսկողություն և դրա արդյունքում կայացնում է որոշում, որը վերջնականապես լուծում է այդ վճռի իրավական ուժի հարցը, իսկ համապատասխան որոշման նկատմամբ համարժեք վերադաս դատական որևէ վերահսկողություն նախատեսված չէ, առաջանում է դատական պաշտպանության արդյունավետության սահմանադրական երաշխիքի իրականացման խնդիր: Նման պայմաններում, Դիմողների պնդմամբ, առաջին ատյանի դատարանի հնարավոր սխալը կարող է դառնալ վերջնական և չվերանայվող, ինչը, հաշվի առնելով արբիտրաժային վճռի նկատմամբ դատարանի որոշման իրավական հետևանքները, համարժեք է անձին արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից զրկելուն, քանի որ չի ապահովում Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման իրական և գործնական կառուցակարգ՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի իմաստով:

Արդյունքում՝ Դիմողները եզրահանգում են, որ վիճարկվող դրույթը, այդ թվում՝ իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքին և 75-րդ հոդվածին:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը **ենթակա է մերժման**՝ ներքոնշյալ հիմքով և պատճառաբանությամբ.

Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված* ***այլ դեպքերում****:*

Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումով գործի քննությունը կարող է մերժվել նաև այն դեպքում, երբ* ***անհատական դիմումն ակնհայտ անհիմն է****:*

Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ *Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը,* ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Սահմանադրության հիշյալ դրույթն ամրագրված է նաև Սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով, որը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով կարող է անհատական դիմում ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը,

բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները,

գ) երբ վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ***ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:***

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:*

Սահմանադրական դատարանը 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ արձանագրել է. «(…) անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Սահմանադրական դատարանը վերը նշված՝ ՍԴԱՈ-21 աշխատակարգային որոշմամբ նաև արձանագրել է. «(…) դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պահանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր (…)»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումի հիմնավորված լինելու պահանջը **չի կարող պահպանված համարվել բոլոր այն դեպքերում, երբ դիմողը պարզապես հղում է կատարում Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության՝ առանց ներկայացնելու բավարար հիմնավորումներ վիճարկվող օրինադրույթի և իր համապատասխան հիմնական իրավունքի և (կամ) ազատության ենթադրյալ խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Սահմանադրական դատարանի 2022 թվականի հուլիսի 12-ի ՍԴԱՈ-126 աշխատակարգային որոշմամբ արձանագրված է «(…) *անձը պետք է անհատական*

դիմումի շրջանակներում ուղղակիորեն մատնանշի և հիմնավորի վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կոնկրետ դրույթի և Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող իր հիմնական իրավունքի և/կամ ազատության ենթադրյալ հակասության **անմիջական** *պատճառահետևանքային կապը:* Այլ կերպ ասած՝ **վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականությունը պետք է ուղղակիորեն հանգեցնի Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված որևէ հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտադրել, որ Սահմանադրության 2-րդ գլխում բովանդակվող սահմանադրահիրավական սկզբունքներին վիճարկվող իրավանորմերի հակասությունը սահմանադրաիրավական իմաստով չի կարող անհատական գանգատարկման առարկա դառնալ, եթե վերջնարդյունքում չի հանգեցնում անձի՝ Սահմանադրության 2-րդ գլխով նախատեսված հիմնական իրավունքի և/կամ ազատության խախտման/սահմանափակման»**:

Սույն անհատական դիմումով վիճարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության)՝ Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներին համապատասխանությունը, ինչի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է.

օրենսդիրը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասով հստակ սահմանել է առաջին ատյանի դատարանի կողմից կայացվող այն որոշումների ցանկը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Հետևաբար՝ առաջին ատյանի դատարանի որոշումների՝ վերաքննության կարգով բողոքարկման հետ կապված օրենսդրի կամքը հստակ է, և վերջինս քաղաքացիական դատավարության շրջանակներում ամբողջությամբ կանոնակարգել է այն դատական ակտերի ցանկը, որոնք ենթակա են բողոքարկման վերաքննության կարգով: Հետևաբար՝ հիմնավորված չէ Դիմողների կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումները

վիճարկվող դրույթով (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացով, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ) պայմանավորելը:

Դիմողները վկայակոչել են վիճարկվող դրույթի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված՝ արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքին, սակայն **բավարար հիմնավորումներ չեն ներկայացրել իրենց՝ հիմնական իրավունքի խախտման փաստի, հետևաբար՝ վիճարկվող դրույթի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) և համապատասխան հիմնական իրավունքի ենթադրյալ խախտման փաստի միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ:**

Դիմողները սահմանափակվել են իրենց՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով երաշխավորված հիմնական իրավունքի խախտման վերաբերյալ պնդումների սոսկ վկայակոչմամբ՝ բավարար հիմնավորումներ չներկայացնելով իրենց կողմից վիճարկվող դրույթի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) և նման խախտման ընդհանրության, դրանց միջև անմիջական պատճառահետևանքային կապի առկայության վերաբերյալ՝ հաշվի առնելով սույն կոնկրետ գործի հանգամանքներն ու առանձնահատկությունները:

Դիմողների կողմից վկայակոչված՝ Սահմանադրության 75-րդ հոդվածի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ հոդվածի բովանդակությունից բխում է, որ **կոնկրետ վերահսկողության պարագայում այն, ինքնին, չի կարող դառնալ առանձին քննարկման առարկա, այլ կարող է դիտարկվել որևէ հիմնական իրավունքի և (կամ) ազատության սահմանափակման լույսի ներքո:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն դիմումով չի հիմնավորվում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին

մասի (դրանում առկա ենթադրյալ օրենսդրական բացի, իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանության) հակասությունը Սահմանադրության 61-րդ հոդվածին, հետևաբար և՝ 75-րդ հոդվածին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ սույն անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը ենթակա է մերժման՝ Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի հիման վրա՝ դիմումի ակնհայտ անհիմն լինելու հիմքով:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6–րդ կետով և 69–րդ հոդվածի 1-ին, 2 և 5–րդ մասերով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Գոհար Ղահրիյանի, Հայկազն Ղահրիյանի և Լևոն Հայրյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 361-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՓՈԽՆԱԽԱԳԱՀ **Է. ՇԱԹԻՐՅԱՆ**

30 հոկտեմբերի 2026 թվականի
ՍԴԱՈ-236